ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

---------- <<--->> ---------- 20 թ.
(կնքման վայրը)

---------- այսուհետ՝ <<Վարձակալ>>, ի դեմս
(կազմակերպության անվանումը)

----------, որը գործում է ----------
(ազգանունը, անունը, պաշտոնը) (կանոնադրության, լիազորագրի)

հիման վրա մի կողմից և ---------- այսուհետ՝ <<Վարձատու>>
(ազգանունը, անունը)

մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

I. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Վարձատուն՝ վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնում ավտոմեքենան:

1.2. Տրանսպորտային միջոցի բնութագիրը՝

ա) ավտոմեքենայի մակնիշը՝ ----------,

բ) թողարկման տարեթիվը՝ ---------- ---,

գ) պետհամարանիշ՝ ----------,

դ) գույնը՝ ----------,

ե) շարժիչի համարը՝ ----------,

զ) թափքի համարը՝ ----------,

է) շասսիի (ամրաշրջանակի) համարը՝ ----------:

1.3. Տրանսպորտային միջոցը Վարձատուին է պատկանում ----------
(սեփականության, վարձակալության)

իրավունքով, ինչը հաստատվում է հետևյալ փաստաթղթերով՝

----------:
(առուվաճառքի պայմանագիր, սեփականության վկայագիր և այլն)

II. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. Վարձակալից պահանջել՝ Տրանսպորտային միջոցն օգտագործելու սույն պայմանագրի պայմանների և դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2. հսկողություն իրականացնել Վարձակալի կողմից Տրանսպորտային միջոցի օգտագործման նկատմամբ.

2.1.3. եթե Վարձակալը Տրանսպորտային միջոցից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, ապա պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. սույն պայմանագիրն ստորագրելու պահից ---------- օրվա ընթացքում
(թվերով և բառերով)

Տրանսպորտային միջոցը հանձնել Վարձակալին.

2.2.2. Տրանսպորտային միջոցը հանձնել վարձակալին սարքին վիճակում՝ դրա նշանակությանը համապատասխան շահագործելու համար.

2.2.3. Վարձակալին հանձնել տվյալ Տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիրը և մյուս փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են դրա օգտագործման համար.

2.2.4. Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Տրանսպորտային միջոցի թերությունները կամ համաչափ իջեցնել վարձավճարը:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. պահանջել Վարձատուից՝ սույն պայմանագրի 2.2.1. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Տրանսպորտային միջոցը.

2.3.2. պահանջել Վարձատուից՝ իրեն տրամադրելու Տրանսպորտային միջոցի պատկանելիքները և փաստաթղթերը.

2.3.3. պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Տրանսպորտային միջոցի վիճակը վատթարացել է.

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. ժամանակին վճարել վարձավճարը՝ սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով և պայմաններով.

2.4.2. Տրանսպորտային միջոցի վարձակալության ողջ ժամանակահատվածում այն պահպանել պատշաճ վիճակում, ներառյալ՝ ընթացիկ վերանորոգումը.

2.4.3. Տրանսպորտային միջոցի վարումը և դրա առևտրային ու տեխնիկական շահագործումն իրականացնել իր ուժերով.

2.4.4. կատարել Տրանսպորտային միջոցի պահպանման, դրա ապահովագրության, ներառյալ՝ իր պատասխանատվության ապահովագրության ծախսերը, ինչպես նաև դրա շահագործման հետ կապված ծախսերը.

2.4.5. պայմանագրի դադարեցման դեպքում ---------- օրվա ընթացքում
(թվերով և բառերով)

Վարձատուին վերադարձնել Տրանսպորտային միջոցն այն վիճակում, ինչպես այն ստացել է՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

III. Վարձավճարը

3.1. Սույն պայմանագրով՝ Տրանսպորտային միջոցի վարձակալության համար

վարձավճարը կազմում է ---------- դրամ:
(թվերով և բառերով)

3.2. 3.1. կետում նշված գումարը ենթակա է ամենամսյա վճարման՝ յուրաքանչյուր ամսվա ---------- -ից ոչ ուշ:

IV.Կողմերի պատասխանատվությունը

4.1. Տրանսպորտային միջոցով, դրա մեխանիզմներով, համասարքերով երրորդ անձանց պատճառված վնասի համար, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվությունը կրում է Վարձակալը:

4.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

V. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրման պահից և շարունակում է իր գործողությունը ---------- ընթացքում:
(նշել ժամկետի սկիզբ ու վերջը)

5.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով,---------- օրինակից, որոնք
(թվերով և բառերով)

ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.3. Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր: Պայմանագիրը պետք է ստորագրեն Կողմերը:

5.4. Սույն պայմանագրի դադարման հիմքերը սահմանվում են գործող օրենսդրությանը համապատասխան:

IX. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Վարձակալ	Վարձատու
----------	----------
	(ազգանունը, անունը)
----------	----------
(հասցեն)	(հասցեն)
----------	----------
(անձնագրի սերիան, ե՞րբ և ո՞ւմ կողմից է տրվել)	(անձնագրի սերիան, ե՞րբ և ո՞ւմ կողմից է տրվել)
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)

Կ.Տ.